

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Հայոց ո՞ր թագավորի անունն է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

արմունկ, երեխա, քանդակագործ, ուսուցիչ, շնագայլ

- Ա) Արգիշտի
- Բ) Իշպուհինի
- Գ) Ռուսա
- Դ) Մենուա
- Ե) Արամե

2. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:

100 տարի + միս, յուղ, ձու չուտելու ժամանակահատված =



- Ա) դարակ
- Բ) տարեդարձ
- Գ) մեղրամիս
- Դ) ժամկոչ
- Ե) դարպաս

3. Բերված ասացվածքներից որի՞ հերոսն է աղվեսը:

- Ա) Խելոք . . . յոթ մոր կաթ է խմում:
- Բ) . . . թողածի համար է ափսոսում, հովիվը՝ տարածի:
- Գ) Կարմիր . . . կաշին չի փոխում:
- Դ) . . . վկան իր պոչն է:
- Ե) . . . ծակը չէր մտնում, շաղգամն էլ պոչից կախեցին:

4. Եթե «**ներհայեցողություն**» բառից ջնջենք կրկնվող տառերը, այնուհետև «**շաղ**»-ի «ընկերոջը», ապա մնացած տառերով կկարդանք մի բառ, որի հոմանիշը պատասխանի տարբերակներից մեկում է: Ո՞ր տարբերակի «ընկերն» է ստացված բառը:

- Ա) դարման
- Բ) գոգավոր
- Գ) ողորկ
- Դ) թեք
- Ե) հարկ

5. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել տառաշարքով:

ՄՄՄՄՄՄՏԿՓՈԳԳԹԾԾԿՎԾՀՎԼԺԿԿԼՁՅԿՎ

- Ա) Մասիսի գագաթին տարին բոլոր հավերժական ձյուն է:
- Բ) Սպիտակ ձյունը ծածկում է հավերժական Մասիսի գագաթը:
- Գ) Մասիսի գագաթը ծածկված է սպիտակ ձյունով:
- Դ) Մասիսի սպիտակափառ գագաթը ծածկված է հավերժական ձյունով:
- Ե) Չյունառատ Մասիսի գագաթին հավերժական ձյուն է:

6. Պատասխանի տարբերակներից որի՞ «ընկերը» չի «քամվել» *Մայրանուշ* բառից:

- Ա) անձավ
- Բ) ծնող
- Գ) երեխա
- Դ) պտուղ
- Ե) կենդանի

7. Պատասխանի տարբերակները հնարամտորեն թաքնվել են բերված հատվածում՝ բացի մեկից: Տարբերակներից որի՞ ընկերը չկարողացավ թաքնվել:

*Երկինք չի տեսել թուփն այդ, հիրավի,
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան,
Միայն գետի մեջ բեկված արևի
Գունատ ցուլերն են դողացել վրան:*

- Ա) զարմ
- Բ) փայլ
- Գ) արդարև
- Դ) երկնակամար
- Ե) ամենևին

8. Պատասխանի տարբերակներից ո՞րը նոր շունչ կտա **աճել, այտ, այց, այր, անձնագիր, ասույթ** բառերին:

- Ա) բեն
- Բ) մեն
- Գ) հո
- Դ) իսե
- Ե) ծա

9. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:

Թանկ + տամա =



Ա) մատնաքաշ Բ) կանթանի Գ) մատնաթուփ Դ) կաթնատուն Ե) կաթնատամ

10. Ո՞ր նախադասության մեջ սխալ կա:

Ա) Հանդիսատեսը հանկարծակի եկավ՝ տեսնելով հայտնի դերասանին բեմի վրա:

Բ) Եղբայրը տեղի տվեց քրոջ խնդրանքին:

Գ) Տանտիրուհին անակնկալի եկավ՝ տեսնելով օտարերկրացի հյուրին:

Դ) Նա հուզիչ ելույթով աչքի ընկավ ասմունքի մրցույթում:

Ե) Գրադարակը դժվարությամբ կարգի բերեց:

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Իմաստուն մեղվիկի բացատրություններին հետևելով՝ նշիր, թե «*մանկավարժական*» բառում պատասխանի տարբերակներից որը չես գտնի (տառերի դասավորությունը չփոխել):

Ա) նյութ, որից Աստված ստեղծեց առաջին մարդուն՝ Ադամին

Բ) «*ռումբ*» բառին իմաստով մոտ բառ

Գ) «*թալան*» բառի ընկերոջը

Դ) «*հմուտ*» բառին իմաստով մոտ բառ

Ե) «*թիկնոց*» բառի հոմանիշը

12. Ո՞ր տառն է չարաճճիություն անում՝ նույն կերպ խցկվում «*բարկ, բարք, վարկ, մերկ, կարգ, մարգ*» բառերի մեջ ու նորացնում դրանք:

Ա) ի

Բ) ո

Գ) ա

Դ) է

Ե) ու

13. Հայ գրողներից մեկն իր կեղծանվամբ ձեռնոց է նետել մահին: Ո՞վ է նա:

Ա) Ավետիք Իսահակյան

Բ) Հայաստան Եղիազարյան

Գ) Գուրգեն Աճեմյան

Դ) Վահան Տեր-Գրիգորյան

Ե) Հմայակ Գրիգորյան

14. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

- Ա) վախ
- Բ) գայրույթ
- Գ) ամոթ
- Դ) ավարտ
- Ե) խինդ



15. Պատասխաններում բերված բառերը, բացի մեկից, մի հետաքրքիր օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:



- Ա) վազվզել
- Բ) քաշքշել
- Գ) քայքայել
- Դ) ծակծկել
- Ե) փայփայել

16. «*Կաքավային, պաշար, իրամատ, հրետազեն, պալատ, ...*»

Տրված բառերից ինչ-որ հատված միևնույն օրինաչափությամբ մկրատելով՝ նոր բառեր կստանաս: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞ր տարբերակի բառն է հաջորդը:

- Ա) փայտփորիկ
- Բ) բնաբան
- Գ) գրքակալ
- Դ) տասնամյակ
- Ե) նշանասյուն

17. Արեգը միևնույն օրինաչափությամբ կազմել է երկու կոտորակ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞ր բառը պետք է լինի մեղվիկի փոխարեն:



- Ա) պանիր
- Բ) տիպար
- Գ) անջատ
- Դ) տապան
- Ե) անտիպ

18. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:

իր, վիրապ, ամիս, արծիվ, բարդի,



- Ա) ծաղիկ
- Բ) կարկին
- Գ) բարեսիրտ
- Դ) կոկիկ
- Ե) կապիկ

19. Արմենը որոշակի օրինաչափությամբ կազմեց «*թախտ, ժապավեն, իմաստակ, լորդ, խանութ, ծիրան*» բառաշարքը: Սոֆին բառաշարքում մեկ այլ օրինաչափություն գտավ և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Տարբերակներից ո՞րը գրեց Սոֆին:

- Ա) կայծակ
- Բ) ծայր
- Գ) կրպակ
- Դ) հարկ
- Ե) կարագ

20. Հանելուկ

*Հեքիաթները մեր բոլոր
Մկսվում են նրանով,
Նրան վերջում կտեսնես,
Թե ճանապարհ դու ընկնես:*

- Ա) Լինում է, չի լինում:
- Բ) Կար չկար:
- Գ) Հո տառը:
- Դ) Երկնքից երեք խնձոր ընկավ:
- Ե) Հեքիաթ-հեքիաթ պապս է:

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

Տաղավար — ավարտական — կանթեղ — եղյամ —



- Ա) եղնի
- Բ) ականանետ
- Գ) մշտադավար
- Դ) խավարտ
- Ե) տնական

22. Բառաշարքի բառերը, միևնույն օրինաչափությամբ կորցնելով տառեր, նորանում են: Հասկանալով՝ ինչն է նրանց միավորում՝ կգտնես, թե պատասխանի ո՞ր տարբերակը կհամարի բառաշարքը:

Դեղնափոշի, քանդակ, կարագ, ծախսել, խորթություն

- Ա) իեդդել
- Բ) ծածկոց
- Գ) թոթվել
- Դ) գրամ
- Ե) գրոհ

23. Շտրիխ կոդում հինգ բառեր են, որոնցում երևում են «մմռ, թթռ, գգռ, սսռ» բաղաձայնները, իսկ ձայնավորներն անտեսանելի են: Վարդուհին նկատեց, որ, ըստ շտրիխ կոդի, բոլոր բառերում ևս մեկ բաղաձայն պետք է պատկերված լիներ բարակ գծի փոխարեն: Ո՞րն է պակասողը:

- Ա) ք
- Բ) հ
- Գ) ն
- Դ) ր
- Ե) ռ



24. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



- Ա) Եթե գինի բերեք, մեր սրտին հաճելի կլինի:
- Բ) Երգեր բերեք մեր սրտին սիրելի:
- Գ) Երգերի համար երեք սրտագին մեղեդի գրեք:
- Դ) Երգում էր գեր տղամարդը իր սիրելի երգը:
- Ե) Ես երգում եմ սրտիս համար սիրելի երգեր:

25. Պահմտոցի խաղալիս Կարենը, Խորենը, Զավենը, Արմենը և Արսենը գրեցին իրենց անունները մի աղյուսակում և խնդրեցին Անին, որ իրենցից մեկի անունն ընտրի, որ ընտրվածը դառնա փնտրողը: Անին նրանց հանձնեց մեկ այլ աղյուսակ, ըստ որի տղաները կարող էին գտնել, թե ով է լինելու խաղում փնտրողը: Ո՞ր անունն էր ընտրել Անին:

- Ա) Կարեն
- Բ) Խորեն
- Գ) Արսեն
- Դ) Արմեն
- Ե) Զավեն

Վ	Ս	Մ	Զ	Ո
Դ	Տ	Թ	Գ	Ր
Կ	Ա	Չ	Շ	Ծ
Ղ	Ի	Ճ	Ե	Խ
Ն	Յ	Ց	Լ	Պ

26. Ինչպիսի՞ն պետք է լինի շարքի շարունակությունը:

Երեքշաբթի, երկուշաբթի, կիրակի, հինգշաբթի, ...

- Ա) չորեքշաբթի, շաբաթ, ուրբաթ
- Բ) չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ
- Գ) շաբաթ, չորեքշաբթի, ուրբաթ
- Դ) ուրբաթ, չորեքշաբթի, շաբաթ
- Ե) ուրբաթ, շաբաթ, չորեքշաբթի

27. Ո՞ր պատմիչի ասույթն է գաղտնագրվել գումարում և հանում մաթեմատիկական գործողությունների միջոցով:

8000+1000, 10-9, 400+500, 4+1, 2000+3000, 30-10, 1000+1000, 8-3, 7000-2000, 3000+4000, 100+300, 8-4, 900-500, 2+3, 6000-1000, 7+1, 2000+7000, 5-4, 1000-100, 7-2, 1000+4000, 6-1, 600-200

- Ա) Ղազար Փարպեցի
- Բ) Եղիշե
- Գ) Մովսես Խորենացի
- Դ) Ղազար Փարպեցի
- Ե) Ագաթանգեղոս

28. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

Տառ, գիրք, դպրոց, դարբին, դարբնոց, կավագործ, կախարդանք,



- Ա) դասարան
- Բ) տնօրեն
- Գ) նստարան
- Դ) համակարգիչ
- Ե) գրադարան

29. 3535 թվով գաղտնագրված է չորսբառանի մի առած: Առածի առաջին և երրորդ բառերը թվերի անվանումներ են: Թվի յուրաքանչյուր թվանշան ցույց է տալիս, թե առածի տվյալ բառի մեջ քանի տառ կա:

Այդ առածն է՝

Ա) Յոթ չափի՛ր, մեկ կտրի՛ր:

Բ) Երկու տես, մեկ առ:

Գ) Տասը չափի՛ր, մեկ կտրի՛ր:

Դ) Մեկ ասես, երկու կլես:

Ե) Հարյուրի կեսը հիսուն է:

30. Եթե բոլոր ամսանունները դասավորենք այբբենական կարգով, ապա ութերորդ ամիս օգոստոսն այդ ցանկում կլինի վերջինը՝ տասներկուերորդը: Ըստ հերթականության՝ ո՞ր երրորդ ամիսը այբբենական այդ ցուցակում կգրադեցնի չորրորդ հորիզոնականը:

Ա) առաջին

Բ) երրորդ

Գ) հինգերորդ

Դ) յոթերորդ

Ե) իններորդ